

ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ  
ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ՊԱՏՈՒԹՅԱՆ



# ՎԱՆԱԳՆ ԴԱՎԹՅԱՆ

## Երկերի ժողովածու

Ե Ր Կ Ո Ի  
Վ Ա Տ Ո Ր Ո Վ  
Վ Ա Տ Ո Ր  
Ե Ր Կ Ր Ո Ր Չ

A  $\frac{11}{55759}$

## Պոեմներ

~~51189~~

«Հայաստան»  
կրթամթերական-թղթային տրեստ 1975



## ԿՈՄԻՏԱՍ

Եվ ես նրան մի անգամ  
Այսպես տեսա երազում...  
...Ամպը լացել, հեռացել,  
Ու թաց հողն էր երազում:

Նա հանդերից էր գալիս,  
Գյուղի ճամփով խաղաղիկ,  
Սև սքեմի փեշերին  
Փուշ էր կպել ու ծաղիկ:

Մխում էր դաշտը գարնան,  
Մխում էր թաց ու տրտում  
Եվ Արարատը պարզված  
Ցուցում էր կապույտում:

Ճամփեզերքին ծվարել  
Աչքը ծավի մի ծաղիկ  
Ու իր թախիժն էր խառնում  
Դաշտի տխուր ծիծաղին:

Նա հանդերից էր գալիս,  
Գունատ շուրթերը մխում,  
Դողում էին ակամա,  
Ու մեղեդին էր բխում...

Կարկաշում էր մեղեդին  
Կոկորդաձայն ու թավիշ,

Վարտանքից թրթուում  
Ու տվաչտում էր ցավից:

Լեռան աղբյուրն էր ասես  
Քարերի մեջ հեկեկում,  
Ու երամը կոռնկի  
Իր հոգնած շուն էր բեկում:

Եվ նա այդպես երգելով,  
Գողացող ձեռքս առավ  
Ու ինձ տարավ հերկերով,  
Այդիներով ինձ տարավ...

Տարավ դժվար լեռներով,  
Մացառներով ու փշով,  
Հույսի միշով ինձ տարավ  
Ու կապուտակ մշուշով:

...Լեռան շուրթին ծվարած  
Գյուղը ծխում երկնքում,  
Ջրաղացի ու հացի  
Անուշ բույրով է խնկում:

Եվ հին տնակն իր անտաշ,  
Իր վաչրենի քարերով  
Մեջքը տվել արևին,  
Տաքանում է արևով:

Ներսում մութ է... Մրապատ  
Գերաններ են ու թարեք,  
Ու թախծում է թարեքին  
Հաղարամյա մի նարեկ:

Շող է կաթում երգիկից,  
Հին թարեքին ու կուծին,

Շող է կաթում նարեկի  
Հաղարամյա մշուշին:

Շող է կաթում երգիկից,  
Լույս է կաթում ու արև  
Օրորոցին, որ կապույտ  
Նուախայով են զարդարել:

Եվ մեղեդին է ծփում  
Օրորոցի տաք շնչով,  
Իր պանդուխտին սպասող  
Հարսի խոնարհ մրմունջով:

Ծավալվում է ու ծփում  
Առաստաղի տակ մրոտ  
Ու պատեպատ է խփում  
Անմեկնելի մի կարոտ:

Ու պատեպատ է խփում  
Քնքշություն մի ամոթխած,  
Մի ամոթխած բարություն  
Ու տխրություն մի հոգնած:

Եվ վարդապետն է լոռում  
Օճորքի սև շուքի տակ,  
Սև սքեմի փեշերից  
Հույս է կաթում և օրհնանք...

Եվ տանում է ինձ նորից  
Մացառներով ու փշով,  
Լույսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:

...Գարնան գոլ է դաշտերում,  
Գարնան բույրեր են հարբած,

Եվ քայլում է դաշտերով  
Մի շիկահեր այգաբաց:

Անէացող մուժի հետ  
Մինչև սարը ոլորվել,  
Ու ձգվել է մի երկար  
Ոսկեդերձան հորովել:

Եվ եղները սպիտակ  
Իրենց կողերը ճոճում,  
Հույս են խմում ու ոսկե  
Ճառագայթ են որոճում:

Եվ հնչում է մեղեդին  
Արշալույսի մեջ արդար,  
Ծավալվում է արևի  
Ալիքների հետ խարտյաշ:

Մի սերմնացան է ասես,  
Որ բարի բուռը բացում  
Ու դաշտերի վրա թաց  
Օրհնություն է տարածում:

Ցելերին է տարածում,  
Յողաթաթախ այդ հանդին  
Ու տարածում հավերժից,  
Անսահմանից էլ անդին:

Եվ վարդապետն է քայլում  
Շաղի միջով ու շողի,  
Սև սքեմի փեշերից  
Կաթում է հոտը հողի:

Եվ տանում է ինձ նորից  
Մացառներով ու փշով,

Հուլյսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:

...Լեռան քարե լանջն ի վեր  
Իբրև քարե աղերսանք,  
Բարձրանում է կիսավեր,  
Խաչը բեկված հին մի վանք:

Ու նման է նա այնպես  
Այն հոգնատանջ Հիսուսին,  
Որ Գողգոթա է ելնում  
Սեփական խաչը ուսին:

Կամարների շուրթերին  
Հին տողեր են, հին գրեր,  
Որ պատել են մամուռով,  
Առեղծվածի պես լռել:

Խորանի մեջ մամռոտած  
Խաղում է շող մի տրտում  
Ու կամարից կաթիլթող  
Արտասուքը մկրտում:

Եվ ծփում է մեղեդին,  
Ասես թե լույս է զտված,  
Ասես թևում է վերում  
Աներևույթ մի աստված:

Թևում թեթև ու հետո  
Գմբեթն ի վեր համբարձում,  
Գնում է նա, անհունի  
Կապույտ դռներն է բացում:

Վարդապետը վերացած,  
Քայլ է անում տրտմաշուք,

Սև սքեմի փեշերից  
Հույս է կաթում ու արցունք:

Եվ տանում է ինձ նորից  
Մացառներով ու փշով,  
Հույսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:

...Իր մամուռով, հատակի  
Ոսկիներով իր բուռ-բուռ  
Ցուլցում է ժայռի տակ  
Խղճի նման մի աղբյուր:

Վարդավա՛ռ է... Կակաշի  
Բոցը հովից ծիծաղում  
Ու քարափի շրթունքից  
Մարջան ու լալ է կախում:

Լալ են կախել ու մարջան  
Գյուղի հարսն ու աղջիկներ  
Ու շիկնել են արևից,  
Երգ ու պարից են շիկնել:

Թրթում է օդի մեջ  
Հաբրբանը զրնգուն,  
Շաղ է գալիս ջրի հետ  
Ու փշրվում է քնքուշ:

Մի շեկ աղջիկ հովի դեմ  
Իր շեկ մազերը ցրել,  
Լաց է լինում ծիծաղով՝  
Վարդ կոշիկն է կորցրել:

Լաց է լինում ծիծաղով,  
Մեջքի շիվը բեկբեկում,

Մաղիկն ասես ցողի տակ  
Բարակ ցողունն է թեքում:

Եվ հնչում է մեղեդին,  
Վարկաչում է սիրավոր,  
Քարեքար է նա թռչում  
Լորիկի պես վիրավոր:

Մավալում է ծայրեծայր  
Միրո պես տաք ու փխրուն,  
Փուչ է դալիս ամպի պես  
Ու անձրևի պես տխրում:

Եվ վարդապետն է քայլում  
Աչքերում լույս ու թախիծ,  
Ու փեշերից սքեմի  
Յող է կաթում ու ծաղիկ:

Եվ տանում է ինձ նորից  
Մացառներով ու փշով,  
Լույսի միջով է տանում  
Ու կապուտակ մշուշով:

...Բայց այս ի՞նչ է, վարդապետ,  
Սե շանթն այս ո՞վ է ճոճում,  
Տես, եզները սպիտակ  
Զարհուրանք են որոճում:

Եվ կարկուտը սևակնած,  
Եվ կարկուտը դժնդակ,  
Կակաչի բոցը առած,  
Տրորում է ոտքի տակ:

Եվ արյուն է կաթկթում  
Օրորոցին, թարեքին,

Եւ արյուն է կաթկթում  
Հազարամյա նարեկին:

Աղջնակն այն, որ թեքում,  
Բեկում էր մեջքն իր դալար,  
Ինչ-որ բրդոտ ձեռքերում  
Գալարվում է խելագար:

Ո՞վ է սև ծուխն այս վառել,  
Սև շանթն այս ո՞վ է ճոճում,  
Տես, եզները սպիտակ  
Մահ ու մուր են որոճում:

Անապատ է, անապատ,  
Արևը թույն է ու ժանդ,  
Անապատ է, անապատ,  
Անծայրածիր մի պատանք...

Եւ վարդապետն է քայլում  
Իր սև թևերը բացած,  
Ասես թե խաչ է քայլում  
Անապատով շիկացած:

Քայլում է նա, շուրթերին  
Սև լոռիթյունն է այրվում,  
Սև սքեմի փեշերից  
Մահ է կաթում ու արյուն:

Մի սև աղջիկ արևին  
Իր սև մազերը ցրել,  
Լաց է լինում ծիծաղով՝  
Վարդ կոշիկն է կորցրել:

Եւ վարդապետն է քայլում,  
Լաց է լինում ծիծաղով,

Սև սքեմի փեշերից  
Մահ է կաթում ու աղոթք:

Եվ մեղեդին է հնչում  
Ավազների վրա տաք,  
Ասես մխանք է զոհի  
Ու հրեղեն պատարագ:

Ասես աղբյուրն է լեռան  
Քարերի մեջ հեկեկում,  
Ու երամը կոունկի  
Իր հոգնած շուն է բեկում:

Հնչում էին կապույտում,  
Զնգում քամբիռ ու զանգեր.  
— Հանգե՛ք, որբեր իմ արնոտ,  
Հանգե՛ք, զոհեր իմ, հանգե՛ք...

Եվ մարում է մեղեդին  
Անարձագանք ավազում,  
Եվ Վարդապետն է քայլում,  
Եվ Վարդապետն է վազում:

Եվ Վարդապետն է վազում  
Շուրթին ծիծաղ, շուրթին ճիշ,  
Պատահողտված սքեմից  
Մահ է կաթում ու քրքիջ:

Եվ Վարդապետն է վազում,  
Եվ Վարդապետն է վազում,  
Եվ քրքիջը խելագար  
Խլանում է ավազում...